

Աշխեն Էդ. Զրբաշյան

Երևանի Պետական համալսարան

ashjrbashyan@ysu.am

ORCID: 0000-0002-7493-352X

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈՆԶԻԱՅԻ ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ
ՁԵՎԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԵՐԳԵՐ ՈՒ ՎԷՐՔԵՐ»
ԺՈՂՈՎԱԾՈՒՄ***

Ամփոփում

Ավետիք Իսահակյանի առաջին ժողովածուն՝ «Երգեր ու վերքեր»-ը (1898), միանգամից ջերմ ընդունելություն գտավ ինչպես ընթերցող հանրության, այնպես էլ գրական շրջանակներում: Գրաքննադատությունը հատկապես բարձր գնահատեց Իսահակյանի պոեզիայի ժողովրդական տարերքը, ազգային և համամարդկային հույզերի ինքնատիպ միահյուսումը: Առաջին ժողովածուն դարձավ այն հիմնաքարը, որի վրա ձևավորվեցին Իսահակյանի ուրույն ոճն ու բանաստեղծական մտածողությունը, նրա քնարական հերոսի էական գծերը:

Զգտելով հաղթահարել ժամանակակից պոեզիայի պաթետիկ ու դատողական հայրենասիրությունը՝ XIX դարավերջի հայ բանաստեղծությունը բացահայտ անցում ատարեց դեպի բուն ժողովրդական տարերքը, ազգային ոգին և մտածողությունը՝ բանաստեղծության զարգացումը տանելով նոր հունով: Իսահակյանի «Երգեր ու վերքեր»-ը այդ միտումի ակնհայտ դրսևորումներից էր: Հայ ժողովրդական պոեզիայի տարերքն այդտեղ իր արտահայտությունը գտավ ոչ միայն մո-

* Հղվածն ընդունվել է տպագրության 12.12.2025:

տիվների, տրամադրությունների, բանաստեղծական պատկերների, այլև տաղաչափական ձևերի յուրացման և ընդօրինակման մեջ:

Իսահակյանի վաղ շրջանի պոեզիայի վրա մեծագույն ազդեցություն է թողել նաև Շիրակի ժողովրդական բանահյուսությունը, որին նա առնչվել էր դեռ մանկուց: XIX դարի երկրորդ կեսին Շիրակի բանահյուսական նմուշների հավաքման և հրատարակման առաջին փորձերին Իսահակյանը նույնպես, անշուշտ, ծանոթ է եղել և ազդվել դրանցից: Հոդվածում առաջին անգամ քննվում է Իսահակյանի առաջին ժողովածուի տաղաչափական ձևերի կապը ժողովրդական պոեզիայի հետ՝ կատարելով մի շարք գործերի զուգադրական համեմատություն: Այսպես, հայտնի է, որ ժողովրդական երգերին ու խաղիկներին բնորոշ են հակիրճությունը, կարճ տողերն ու փոքր անդամները. Իսահակյանի առաջին ժողովածուում նույնպես գերակշռում են կարճ չափերը՝ 8 և 7-վանկանի տողերի զուգորդմամբ (բանաստեղծությունների գրեթե 70 տոկոսը): Այս չափը Իսահակյանի առաջին երկու տասնամյակների պոեզիայի նախընտրած ձևն էր և դարձավ երգչի յուրօրինակ այցեքարտը:

Բանալի բառեր – Ավ. Իսահակյան, «Երգեր ու վերքեր», տաղաչափություն, Շիրակի բանահյուսություն, խաղիկներ, մանիներ, հակիրճություն, բնապատկեր, հանգավորում, զուգահեռականություն:

Ashkhen Ed. Jrbashyan

THE USE OF METRICAL FORMS AND FOLK POETRY DEVICES IN AVETIK ISAHAKYAN'S COLLECTION "SONGS AND WOUNDS"

Summary

The first collection of poems by the Armenian poet Avetik Isahakyan, "Songs and Wounds" (1898), was warmly received by both the reading public and literary circles. Critics particularly praised the folkloric element of Isahakyan's poetry, the unique interweaving of national and universal emotions. This first collection became the cornerstone upon which Isahakyan's unique style and poetic thinking, as well as the key features of his lyrical hero, were formed.

In an effort to overcome the pathetic and sober patriotism of Romantic literature, Armenian poetry of the late 19th century made an open transition to folkloric elements, national spirit and thoughts, guiding the development of our poetry in a new direction. Isahakyan's "Songs and Wounds" became one of the clearest manifestations of this tendency. Elements of Armenian folk poetry found their expression not only through the borrowing and imitation of motifs, moods, and poetic imagery, but also through the imitation of metrical forms.

The greatest influence on Isahakyan's early poetry was the folklore of Shirak, with which he was familiar since childhood. Isahakyan was undoubtedly familiar with and influenced by the first attempts to collect and publish examples of Shirak folklore in the second half of the 19th century. This article is the first attempt to explore the connection between the metrical forms of Isahakyan's first collection and folk poetry, conducting a comparative analysis of several works. It is known that brevity, short lines, and metrical units are characteristic of folk songs and rhymes. Isahakyan's first collection also features a predominance of short meters, with a combination of 8- and 7-syllable lines (approximately 70 percent of the poems). It should be noted that this meter was Isahakyan's preferred form of poetry during the first two decades and became a hallmark of his poetic style.

Keywords: Av. Isahakyan, "Songs and Wounds," versification, Shirak folklore, play song, mani, brevity, landscape, rhyme, parallelism.

Ашхен Эд. Джрбашян

ИСПОЛЬЗОВАНИЕ МЕТРИЧЕСКИХ ФОРМ И СРЕДСТВ НАРОДНОЙ ПОЭЗИИ В СБОРНИКЕ АВЕТИКА ИСААКЯНА «ПЕСНИ И РАНЫ»

Резюме

Первый сборник армянского поэта Аветика Исаакяна «Песни и раны» (1898) был сразу же тепло принят как читающей публикой, так и литературными кругами. Критики особенно высоко оценили фольклорные элементы в поэзии Исаакяна, уникальное переплетение национальных и общечеловеческих эмоций. Первый сборник стал краеугольным

камнем, на котором сформировались уникальный стиль и поэтическое мышление Исаакяна, основные черты его лирического героя.

Стремясь преодолеть патетический и рассудительный патриотизм романтической литературы, армянская поэзия конца XIX в. совершила явный переход к исконному фольклорному элементу, национальному духу и мышлению, направив развитие нашей поэзии в новое русло. «Песни и раны» Исаакяна стали одним из очевидных проявлений этой тенденции. Элементы армянской народной поэзии нашли своё отражение не только в заимствовании и подражании мотивам, настроениям, поэтическим образам, но и в использовании метрических форм. Наибольшее влияние на раннюю поэзию Исаакяна оказал фольклор Ширика, с которым он был знаком с детства. Исаакян, безусловно, был знаком и с первыми попытками сбора и публикации образцов ширакского фольклора во второй половине XIX в. и находился под их влиянием.

В статье впервые предпринята попытка исследовать связь метрических форм первого сборника Исаакяна с народной поэзией, проведя сравнительное сопоставление ряда произведений. Так, известно, что краткость, короткие строки и метрические единицы характерны для народных песен и рифм. И в первом сборнике Исаакяна также преобладают короткие метры, в сочетании с 8- и 7-сложными строками (около 70 процентов стихотворений). Следует отметить, что этот размер был предпочтительной формой при создании стиха в поэзии Исаакяна в первые два десятилетия его творчества и стал уникальной визитной карточкой поэта.

Ключевые слова: Ав. Исаакян, «Песни и раны», стихосложение, ширакский фольклор, игровая песня, мани, краткость, пейзаж, рифма, параллелизм.

Մուտք

1898 թվականին Ալեքսանդրապոլում լույս տեսավ Ավետիք Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուն, որն ազդարարեց նոր բանաստեղծի ծնունդը: Հետաքրքիր են հենց իր՝ բանաստեղծի հուշերը՝ կապված այդ ժողովածուի անմիջական, ոչ գրավոր արձագանքնե-

րի հետ. «1898 թվին, մարտ ամսին Թբիլիսիումն էի, «Երգեր ու վերքեր» բանաստեղծություններիս գրքույկը նոր էր լույս տեսել. անձամբ գնում էի մեր հռչակավոր գրողների մոտ և խորին ակնածանքով գրքույկս ներկայացնում էի նրանց: Գնացի Աղայանի մոտ, ակնոցը շիտկեց, բացեց գրքույկս, ժպիտով կարդաց ձոնս, ապա մեջեմեջ կարդաց մի քանի ոտանավորներ, հետո գրկեց ինձ ասելով՝ «կեցցես, հա՛մ շնորհքով բանաստեղծ ես, հա՛մ խելացի տղա»» (Իսահակյան, 1946, 7): Ահա ինչպես է հիշում բանաստեղծը նաև Պերճ Պոռոջյանի գնահատականը. «Հայրենաշունչ բանաստեղծ ես, ապրես,– ասաց հայրական ձայնով,– Շիրակից ուրիշ տեսակ երգիչ, իհարկե, չէր կարող ծագել» (Իսահակյան, 1964, 8):

Գրական քննադատությունը նույնպես անմիջականորեն արձագանքեց Իսահակյանի առաջին ժողովածուին՝ երբեմն տրամագծորեն հակադիր գնահատականներ տալով: Գրքի առաջին գրախոսն էր Նիկոլ Աղբալյանը, որն իր «Երգ ու վերք» հոդվածում հատկապես բարձր գնահատեց Իսահակյանի պոեզիայի ժողովրդական տարերքը. նրա համոզմամբ՝ «հեղինակը նոր զգացմունքների աշխարհ է դնում մեր առաջ և այնտեղ ինքը լիազօր տէր է, մրցակից չունի» (Աղբալյան, 1898, 842):

Թեև բանաստեղծը սնվում էր ազգային ակունքներից, բայց միևնույն ժամանակ արծարծում էր համամարդկային հույզեր ու տրամադրություններ: Ավելին, Աղբալյանը համոզված էր, որ Իսահակյանի պոեզիայի «իրական չափը» հենց այդ ժողովրդական լարն է, որից նա չպետք է շեղվի: Դա «վշտով, ցաւով, կսկիծով, հուսահատութեան հասցնող երազների ցնդումով, քնքշութեամբ» (851) երգած անպատասխան սերն է: Այդ իրական չափը ժողովրդական մտածողությունն է, ժողովրդից վերցված ձևերի ու ոճի յուրացումը: «Այստեղ,– իրավացիորեն նկատում է քննադատը,– երևան է գալիս բանաստեղծի մի նոր յատկութիւնը՝ *ժողովրդականությունը*, որ նրա... բնագծի ամենաթանկագին ու կարևոր մասն է...» (853):

Տրամագծորեն հակադիր կարծիք է հայտնում Լեոն իր «Ռուսահայոց գրականութիւնը...» գրքում: Խոսելով մեր նոր բանաստեղծության վրա ժողովրդական պոեզիայի ազդեցության մասին՝ նա նկատում է. «ժողովրդական երգի խիստ ազդեցութեան տակ է բանաստեղծութիւններ գրում *Աւերիք Իսահակեան*... Նա իւրացրել է այդ երգի ձևերը, լեզուն և շատ անգամ կարողանում է զգացմունք հաղորդել իր երգերին: Փոքրիկ են այդ երգերը, խճողված ժողովրդական ոճերով ու դարձուածքներով: Պ. Իսահակեան, ինչպէս երեւում է, ուզում է աշուղ դառ-

նալ... Մեր բոլոր նոր բանաստեղծներն են սիրում յաճախ դիմել ժողովրդական ձևին, բայց ոչ ոքին դա այնպես չէ աջողվում, ինչպես Պ. Իսահակեանին...» (Լէօ, 1904, 94): Սակայն արտաքուստ գովասանք թվացող այդ բնութագրումով Լեոն արտահայտում է իր ոչ այնքան դրվատական վերաբերմունքը բանաստեղծի ընտրած ուղու հանդեպ. «Սակայն մենք պիտի նկատենք, որ շարունակելով միշտ նմանվել ժողովրդին, Պ. Իսահակեան հազիւ թէ կարողանայ շատ առաջ գնալ... Պէտք է մօտ լինել ժողովրդի զգացմունքներին, մտաւոր գանձերին, բայց ոչ թէ լոկ նմանվելու համար, այլ այդ գանձերից ինքնուրոյն ստեղծագործական նիւթեր պատրաստելու համար» (Լէօ, 1904, 95):

Հետագա տասնամյակների գրականագիտությունը բարձր է գնահատել Իսահակեանի առաջին ժողովածուն՝ այն համարելով բանաստեղծական ինքնատիպ մտածողության արգասիք, որ սնվում է ժողովրդական բառ ու բանից: «Մեծ բանաստեղծն իր երգերում դրել է ժողովրդի սիրով բաբախող իր սիրտը,- գրում է Ա. Ինձիկյանը:- Նա երգում է այնպես, ինչպես բանաստեղծ ժողովուրդը կերգեր - անձնավորված մի անհատի մեջ: Եվ միանգամայն հասկանալի է, որ ժողովուրդը բանաստեղծի երգերից շատերը համարում է իր սեփական ստեղծագործությունները» (Ինձիկյան, 1977, 8): Ավելին, այս առաջին ժողովածուն Իսահակեանի համար դարձավ այն հիմնաքարը, որի վրա պետք է ձևավորվեր նրա ուրույն ոճը, զարգանար բանաստեղծական մտածողությունը: Ճիշտ է նկատել Էդ. Ջրբաշյանը՝ գրելով. «...Հենց այդ շրջանում է ձևավորվում Իսահակեանի քնարերգության հիմնական որակը, ամբողջանում են նրա քնարական հերոսի էական գծերը: Սերունդների գիտակցության մեջ Իսահակեան քնարերգուն ամենից առաջ և ամենից ավելի մտել է այդ շրջանի երգերով» (Ջրբաշյան, 1982, 115):

1. Շիրակի ժողովրդական բանահյուսությունը և Իսահակեանի առաջին ժողովածուն

XIX դարավերջի հայ բանաստեղծությունը ձգտում էր հաղթահարելու ռոմանտիկական պոեզիայի՝ որոշ առումով պաթետիկ ու դատողական հայրենասիրությունը (Պատկանյան, Շահագիզ, Ալիշան և այլք)՝ անցում կատարելով դեպի բուն ժողովրդի տարերքը, ազգային ոգին ու մտածողությունը և նոր հունով տանելով հայ բանաստեղծության զարգացումը: Հովհ. Հովհաննիսյանը, Ղ. Աղայանը, Հովհ. Թումանյանը և Ավ. Իսահակյանը դարձան այդ նոր, Թումանյանի բնորոշմամբ՝

«բնաշխարհիկ» ուղղության (Թումանյան, 1994, 536) առաջամարտիկները:

Իսահակյանի առաջին շրջանի գործերում, մասնավորապես՝ «Երգեր ու վէրքեր» ժողովածուում հայ ժողովրդական պոեզիայի տարերքն արտահայտվեց ոչ միայն մոտիվների, տրամադրությունների և բանաստեղծական ձևերի յուրացման ու ընդօրինակման, այլ նաև ժողովրդական պոեզիայի տաղաչափական սկզբունքների կիրառության մեջ: Դեռևս Ն. Աղբալյանն էր նկատում, որ «Պր. Իսահակեանը իր զգացմունքները շատ տեղ արտայայտում է ժողովրդական բանաստեղծութեան արտաքին ձևով. այստեղ թէ լեզուն, թէ չափը, թէ ոճը ժողովրդական է...» (Աղբալեան, 1898, 851):

Շիրակի բանահյուսական ժառանգությունը հարուստ է ու բազմաժանր. հատկապես լայն տարածում են ունեցել ժողովրդական երգերը, խաղիկները, մանիները, պարերգերն ու ջանգյուլումները, աշխատանքային, ծիսական, հարսանեկան երգերը, աշուղական պոեզիայի տարատեսակները: Սրանց հիմնական և գերիշխող թեման սերն է՝ իր հարուցած տառապանքով և ուրախությամբ՝ միախառնված աշխատանքի բերկրանքին: Շիրակի քնարական բանահյուսության նմուշները հավաքելու առաջին փորձերը վերաբերում են XIX դարի երկրորդ կեսին, երբ հայ իրականության մեջ առհասարակ թափ էր առնում բանահավաքչությունը, և շատերն էին գրի առնում ժողովրդական ստեղծագործության նմուշներ՝ խորապես գիտակցելով դրանց դերն ու նշանակությունը ազգային մշակույթի յուրացման ու տարածման գործում:

Շիրակի քնարական ժողովրդական երգերը գրի առնելու և հրատարակելու պատմությունն սկսվում է 1890-ականներից: 1895 թ. ալեքսանդրապոլցի հայտնի երաժշտագետ, բանագետ Արշակ Բրուտյանը հրատարակում է իր հավաքած ժողովրդական երգերը՝ «Ռամկական մրմունջներ» վերնագրով: Ինչպես ինքն է գրում գրքի առաջաբանում, «...երբեմն գիւղերը շրջելով, երբեմն աշուղներին և ուրիշ գիտակ անձանց երգել տալով՝ մի քանի հարիւր խաղի, տաղի հին եղանակներ (երգերի հետ միասին), պարերգեր, և սոսկ (առանց բառերի) պարի եղանակներ ձայնագրեցի անկորուստ մնալու... համար» (Ռամկական մրմունջներ, 1895, 3): Այդ ժողովածուն այնպիսի հաջողություն ունեցավ, որ մինչև 1904 թ. ևս երեք անգամ վերատպվեց: Վերջին հրատարակության առաջաբանում բանագետը գրում է. «...Նախկին հրատարակութեանց բոլոր օրինակների այսքան կարճ ժամանակամիջոցում սպառուելը՝ միանգամայն սիրալիք ընդունելութեան գրաւական է ըն-

թերցասէր հասարակութեան կողմից» (Ռամկական մրմունջներ, 1904, 11):

Իսկապես, գիրքը լայն ճանաչում էր վայելում և արագ սպառվում, դրանից որոշ նմուշներ օգտագործում էին նույնիսկ այբբենարաններում և տարբեր դասագրքերում, և դժվար է պատկերացնել, որ Իսահակյանը ծանոթ չլիներ այդ ժողովածուին, որոշ ազդակներ կրած չլիներ դրանից:

1899 թ. «Ազգագրական հանդէս»-ի Ե հատորում, ի թիվս բանահյուսական այլ նյութերի, լույս է տեսնում նաև «Շիրակի ժողովրդական երգեր» հավաքածուն, որը Գյումրու և շրջակա գյուղերի բնակիչներից գրի էր առել բանահավաք և կրթական գործիչ Մկրտիչ Իսահակյանը:

Անշուշտ, Ավետիք Իսահակյանի ծանոթությունը ժողովրդական բանահյուսությանը շատ ավելի խոր արմատներ ուներ: Նա մանկուց անմիջական սերտ շփում է ունեցել ժողովրդի մարդկանց հետ, լսել Շիրակի տարբեր զրույցներ, մանիներ, աշուղական երգեր, որոնք դարձել էին նրա էության անբաժանելի մասնիկը: Եվ այդ հոգեհարազատությունից էր ծնվել նաև նրա առաջին գիրքը՝ «Երգեր ու վերքեր»-ը, որի առնչակցությունը ժողովրդական պոեզիայի ոճին, լեզվին ու կառուցվածքային առանձնահատկություններին ակներև է: Գրականագետ Արամ Ինձիկյանն առանձնացրել է այդ կապի մի շարք բաղադրատարրեր, որոնցից կարելի է նշել՝ ա) *զուգադրությունը* (քնարական հերոսի տրամադրությունները զուգահեռվում են բնության երևույթների հետ), բ) *հակադրությունը* (քնարական հերոսն իր մոայլ հոգեվիճակը հակադրում է բնության պայծառ պատկերներին), գ) *բնության շնչավորումը* (բնության երևույթներին դիմելը, նրանցից սպրումակցում ակնկալելը), դ) *երկխոսային բնույթը* (սիրած էակին կամ որևէ մտերիմ մարդու դիմելը), ե) *հակիրճությունը*, զ) *գունային մակդիրների* կիրառությունը: Այս բոլոր հատկանիշները, իհարկե, կարելի է միավորել մեկ ընդհանուր բնութագրումով՝ ժողովրդական բառ ու բանին բնորոշ պատկերավորություն, ոճ և լեզվամտածողության: Ակնհայտ է, որ այս հատկանիշներն Իսահակյանի պոեզիայում ժողովրդական բանահյուսության հետ սերտ առնչության արդյունք են: «Այնքան ժողովրդայնությունն օրգանական է, - իրավացիորեն նկատում է գրականագետը, - որ դժվար է որոշել որտեղ է Իսահակյանն օգտագործել ժողովրդական երգը, և որտեղ՝ հնարել, ստեղծել իր սեփականը՝ ժողովրդականի ոգով ու ոճով» (Ինձիկյան, 1977, 11):

2. Իսահակյանի առաջին գրքի տաղաչափական ձևերն ու ժողովրդական պոեզիան

Գրականագիտության մեջ, վերոհիշյալ դրական գնահատականներով հանդերձ, Իսահակյանի առաջին գրքի բանաստեղծությունների տաղաչափական ձևերն ու կառուցման սկզբունքները հատուկ ուշադրության չեն արժանացել, որևէ լուրջ ուսումնասիրության նյութ չեն դարձել: Այնինչ Իսահակյանի երկերի կապը ժողովրդական խաղիկների, բանահյուսական երգերի ռիթմի, տաղաչափության ու հանգավորման եղանակների հետ բացում է լրացուցիչ շերտեր, որոնք նոր լույս են սփռում մեծ բանաստեղծի պոետական ժառանգության վրա:

Մի կարևոր դիտարկում. իր առաջին ժողովածուում ընդգրկված բանաստեղծություններից շատերն Իսահակյանն ավելի ուշ էապես մշակել է ու տպագրել նոր տեսքով՝ ավելի հղկված ու բարեհունչ, սակայն այդ բանաստեղծությունների հին և նոր տարբերակների՝ մեր կողմից իրականացրած մանրակրկիտ համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց չափն ու ռիթմը որևէ փոփոխության չեն ենթարկվել: Իսահակյանը գերազանցապես հղկել է պատկերները, օգտագործել ավելի բարեհունչ բառեր ու արտահայտություններ, սակայն ընդհանուր առմամբ հավատարիմ է մնացել իր ընտրած տաղաչափական ձևերին: Մեր դիտարկմամբ՝ միայն երկու բանաստեղծության տողաչափերի մեջ է Իսահակյանը կատարել փոքրիկ փոփոխություններ («Օխտը սարով հեռո՛ւ քեզնից...» և «Սօսիները կ'սօսափին...»), իսկ մյուսներում տողաչափն ու ռիթմը թողել է անփոփոխ:

Կարծում ենք՝ նպատակահարմար է քննության նյութ դարձնել այդ բանաստեղծությունների առաջին՝ նախնական տարբերակները՝ տպագրված 1898 թ. ժողովածուում, որպեսզի ցույց տանք ստեղծագործական վաղ շրջանում երիտասարդ բանաստեղծի նախընտրած տաղաչափական ձևերի իրական պատկերն ու բնույթը: Մյուս կողմից՝ այդ ձևերն ու չափերը, հենց այդ շրջանից սկսած, դարձան նրա ստեղծագործական ողջ կյանքի ուղեկիցը՝ ձևավորելով Իսահակյան բանաստեղծի դիմագիծը և ընդգծելով նրա ստեղծագործության օրգանական կապը ժողովրդական պոեզիայի հետ:

Այսպես, հայտնի է, որ ժողովրդական երգերն ու խաղիկները սովորաբար ունեն կարճ, խաղարկուն տողեր. դրանք կա՛մ 7, կա՛մ 8-վանկանի են՝ 4+3, 3+4 կամ 4+4 բաժանումներով: Այսինքն՝ դրանց բնորոշ են հակիրճությունն ու փոքր անդամները, որոնք հնարավորություն

են տալիս սեղմ և առանց ավելորդ բառերի շեշտադրելու հույզերի, ապրումների հիմնական առանցքը: Իսահակյանի առաջին ժողովածուում նույնպես գերակշռում են հենց այս չափերը: Քննելով «Երգեր ու վերքեր»-ի (1898) տաղաչափական կառուցման ձևերն ու ռիթմը՝ կարող ենք ներկայացնել հետևյալ պատկերը. այնտեղ ընդգրկված 60 բանաստեղծություններից մոտ 70 տոկոսը գրված է 8 և 7-վանկանի տողերի կանոնավոր գուգորդմամբ: Դրանք կարճ տողեր են, որոնց միջոցով բանաստեղծը հնարավորություն է ստանում վերստեղծելու ժողովրդական երգերի, մանիների ու խաղիկների նմանողության պատրանք: Պետք է նշել, որ այս չափը, որն ընդհանրապես Իսահակյանի առաջին երկու տասնամյակների պոեզիայի նախընտրած ձևն էր և դարձել էր երգչի յուրօրինակ այցեքարտը, մեծ չափով գրավել է նաև Թումանյանին. բավական է հիշել «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքն ու վերջերգը, «Անուշ»-ի նախերգանքը, մի շարք այլ գործեր: «Երգեր ու վերքեր»-ի՝ այս չափով գրված որոշ գործեր մշտապես սիրելի են եղել ժողովրդին և դարձել են նաև սիրված երգեր՝ «Սև-աչքերէն շա՛տ վախեցիր», «Պայծառ լուսնի շուշան փոշին», «Գիշերն եկավ, զով հովն ընկավ» և այլն:

Ժողովածուում հանդիպում են նաև փոքր թվով միայն 7/4+3/ (ընդամենը 3 բանաստեղծություն) և միայն 8/4+4/ (2 բանաստեղծություն) վանկանի տողաչափերով գրված գործեր: Կան նաև այս երկու չափերի խառը գուգորդումներով գործեր (9 բանաստեղծություն): Ըստ այդմ՝ կարելի է պնդել, որ 60 բանաստեղծությունից 52-ը գրված է 8 կամ 7-վանկանի տողերի տարբեր գուգորդումներով՝ կանոնավոր կամ անկանոն: Մնացած գործերը կա՛մ գրված են 5-վանկանի կարճ տողերով, կա՛մ 5-վանկանի անդամների տարաբնույթ գուգորդումներով (10 և 5-վանկանի տողերի համադրմամբ): «Երգեր ու վերքեր»-ի բանաստեղծությունների տաղաչափական կառուցվածքի պատկերը ներկայացնենք հետևյալ աղյուսակով.

«Երգեր ու վերքեր» ժողովածուի տողաչափերը

8 և 7-վանկանի տողերի կանոնավոր գուգորդմամբ	8 և 7-վանկանի խառը գուգորդմամբ	7-վանկանի տողերով	8-վանկանի տողերով	5-վանկանի տողերով	5 և 10-վանկանի տողերի խառը գուգորդմամբ
39	9	3	2	3	4

Վերոբերյալից պարզ է դառնում, որ Իսահակյանն այս ժողովածուում գերազանցապես կիրառել է կարճ տողեր (առավելագույնը՝ 10-վանկանի, բայց հիմնականում 7 կամ 8-վանկանի), և դա, անշուշտ, ժողովրդական պոեզիային բնորոշ լեզվամտածողության, գեղարվեստական պատկերավորման սկզբունքների արգասիք էր: Տողերի հակիճությունը, սեղմությունը հնարավորություն են տալիս ծավալուն նկարագրությունների փոխարեն օգտագործելու դիպուկ պատկերներ, քնարական հերոսի հուզաշխարհը ներկայացնելու բնանկարի հարուստ համապատկերում, մի յուրահատկություն, որը նույնպես խորապես բնորոշ էր ժողովրդական պոեզիային:

Փորձենք ժողովրդական երգերից և Իսահակյանի բանաստեղծություններից զուգահեռաբար ներկայացվող օրինակներով ցույց տալ դրանց տաղաչափական, կառուցվածքային և պատկերավորման նմանությունները, որոնք, անշուշտ, արդյունք են ոչ այնքան անմիջական ազդեցության, որքան ժողովրդական մտածողության խորքային յուրացման: Ահա զուգահեռ օրինակներ 7/3+4/ չափի, որը, ի տարբերություն 7/4+3/-ի, մեր պոեզիայում այնքան էլ տարածված չէ, սակայն ժողովրդական երգերում բավական հաճախադեպ է.

Արև, դու / անցի գնայ,

Կանգ տուր / ու անցի գնայ,

Ամեն եա/րիս տեսնելուն,

Բարև տուր / անցի գնայ: (Ազգագրական հանդես, 1899, 203)

Էս ճամփէն / ոլո՛ր-մոլո՛ր

Սև ծովի / բոլոր կերթայ.

Շուշան եարս / ինձ թողեր է,

Էն տղի / հետ ո՛ր կերթայ... (Երգեր ու վերքեր, 1898, 53)

Ահա մեկ այլ նմանություն, որտեղ 7/3+4/ և 7/4+3/ տողաչափերը զուգակցվում են.

Ա՛յ ախչի, / հուր ես, նուր ես, 3+4

Ես ծարաւ եմ, / դու ջուր ես, 4+3

Ախչի, ես / որ չը լինիմ՝ 3+4

Գու դարբէդար / կը կորես: 4+3 (Ռամկական մրմունջներ, 1895, 102)

Էս գիշե՛ր /- ամպհով գիշե՛ր- 3+4

Կարօտ աչքիս / քուն չի՛ գայ, 4+3

Էս դարդե՛ր, / մրմուռ դարդե՛ր, 3+4

Իմ սև սրտէս / վազ չե՛ն գայ... 4+3 (Երգեր ու վերքեր, 1898, 23)

Նմանությունները դրսևորվում են ոչ միայն տաղաչափության, այլև լեզվամտածողության մեջ և պատկերային համակարգում, քնարական ապրումի ներկայացման եղանակներում: Ահա երկու նմանատիպ օրինակներ, որոնցում ոչ միայն տողաչափերն են նույնական (7/4+3/), այլև քնարական ապրումները.

Ջուրս տաք է, ջուր բերէք,

Հնդստանու հունդ բերէք,

Էլ ու գինս թամամ է,

Ղարիբ եարիս տուն բերէք: (Ռամկական մրմունջներ, 1895, 90)

Կաթի սերը քաշեր եմ,

Դրեր եմ հովին սառի,

Ալ գոգնոցս փռեր եմ,

Արի, թառլա՛ն, թը՛ռռ, ա՛րի:

Տեղ եմ գցեր շւաքում,

Քամին կուգայ – գո՛վ կանի.

Լուսնի շողքն է մեր ծոցում,

Չափ տո՛ւր, չափ ա՛ռ – չո՛ւստ արի: (Երգեր ու վերքեր, 1898, 60)

Համեմատենք նաև մոր կարոտով տառապող քնարական հերոսի ապրումները, նրա դիմելը ծովից եկող մարմանդ հովերին և առավոտվա քամիներին.

Առաւօտեան քաղցր հովիկ,

Գնա՛ դէպ երկիրն Զաւախ,

Ունիմ մէկ ծերունի մայրիկ,

Գնա՛ տես ի գիւղն Կարծախ: (Ռամկական մրմունջներ, 1895, 47)

Սարից կուգաք, նշխուն հաւքե՛ր,

Ա՛խ, իմ մօրս տեսեր չէ՞ք.

Ծովից կուգաք, մարմանդ հովե՛ր,

Ա՛խր, բարև բերեր չէ՞ք... (Երգեր ու վերքեր, 1898, 20)

Ինչպես ժողովրդական պոեզիայում, այնպես էլ Իսահակյանի երգերում բանաստեղծական ապրումը հաճախ զարգանում է բնության տեսարանի և քնարական հերոսի հոգեվիճակի զուգադրմամբ (պարալելիզմով): Այդ սկզբունքով է գրված, օրինակ, նշանավոր «Պայծառլուսնի շուշան-փոշին...» բանաստեղծությունը, որը դարձել է նաև ժողովրդի կողմից շատ սիրված երգ.

Լուսնակն անցաւ.– մութը մթին

Մաղեց հեզ գետի վրայ...

Ծանր խշշաց լացող-ուռին.

–Սիրտս տխո՛ւր կ’հեւայ... (Երգեր ու վերքեր, 1898, 43)

Մեկ այլ բանաստեղծության մեջ քնարական հերոսն իր ճնշված ու քնքուշ սիրտը համեմատում է տոթից թառամած վարդի հետ.

Տոթը այրեց վարդն – անո՛ւշ,

Նա թառամեց, ա՛խ, ափսո՛ս,

Վիշտը ճնշեց սիրտս քնքո՛ւշ,

Նա խորտակեց, վա՛խ, ափսո՛ս... (Երգեր ու վերքեր, 1898, 33)

Ժողովրդական մոտիվներից, բանահյուսական տարաբնույթ ձևերից օգտվելու հանգամանքը արտահայտվում է նաև նրանում, որ Իսահակյանը հաճախ խոսում է ոչ թե իր անունից, այլ ժողովրդի մարդու, գյուղացու, գեղջկուհու, աշուղի: Այդպիսին են «Դատարկյուն աշըղի խաղերը» շարքի բանաստեղծությունները, «Մաճկալ ես, բեզարած ես» և շատ այլ գործեր: Այսպես, «Բալէս ունի հնդու մաթայ» բանաստեղծության մեջ Իսահակյանն արտահայտել է երիտասարդ մոր քնքուշ զգացմունքներն իր նորածնի հանդեպ.

Բալէս ունի հնդու մաթայ,

Ոսկէ–օրոցք, ատլաս–ծածկոցք.

Պուպո՛ւշ–դարդար, նխշուն բալա՛յ,

Պաճիկ արա՛... օ՛ր, օ՛ր, լալա՛յ. (Երգեր ու վերքեր, 1898, 34)

Ակնառու է նաև ժողովրդական պոեզիայից անցած ներքին հանգը, որը շատ բնորոշ էր հատկապես աշուղական և ժողովրդական պոեզիային. այդպիսին է «Բիհգյոլ (հայ ժողովրդական առասպել)»-ը, որտեղ բանաստեղծը դիմել է ներքին հանգի, կրկնությունների և այլ ձևերի.

Վառ անուրջում ուղիսն է մնչում,–

Ծփումեն սէ՛զ ու արո՛տ.

Բլբուլների հոյլքն է շնչում,–

Շնչում է սէ՛ր ու կարո՛տ... (Երգեր ու վերքեր, 1898, 38)

Իսահակյանը նաև կիրառել է քառատող տան՝ ժողովրդական պոեզիայում լայն տարածում գտած հանգավորման այն ձևը, երբ 1-ին, 2-րդ և 4-րդ տողերն ունենում են նույն հանգը, իսկ 3-րդ տողը մնում է անհանգ: Ահա ժողովրդական երգերից և Իսահակյանի ժողովածուից համանման օրինակներ.

Հարավ քամին գալիս է,

Դուռը շքի-շքի փալիս է,

Նանի, ելի դուռը բաց,

Ջարիբ յարըս գալիս է: (Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը, 2024, 371)

Ո՛վ կեանք ունի, դարդ է՛լ ունի,

Դարդին դարման եար էլ ունի.

Մենակ ես եմ քամբաղդ ծներ –

Սիրտս դարդոտ ու ճար չունի. (Երգեր ու վերքեր, 1898, 27)

Իսահակյանի վաղ շրջանի պոեզիայի և ժողովրդական երգերի համեմատական քննությունը հանգեցնում է նաև դրանց հետադարձ կապի կանխավարկածին. Իսահակյանի պոեզիան այնքան հարազատ է ժողովրդին, որ հաճախ նրա երգերի նմանողությամբ ստեղծվել են բանահյուսական նոր նմուշներ՝ կարծես ջնջելով կապը հեղինակային և ժողովրդական ստեղծագործության միջև: Այս առումով հետաքրքիր փաստ է «Ռամկական մրմունջներ»-ի առաջին հրատարակության մեջ բանահավաքի կողմից գրի առած «Արագն եկավ լափին տալով» սիրված երգը (Ռամկական մրմունջներ, 1895, 50) որն իրականում Հովհ. Հովհաննիսյանի բանաստեղծությունն է¹⁸:

Ավարտելով նշենք հետևյալը. քիչ գրողներ կան, որոնց հենց առաջին գիրքը միանագմից մտնում է գրականություն և հիշվում սերունդների կողմից: Այդպիսի ձակատագիր ունեցան Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ»-ը, Շիրազի «Գարնանամուտը» և, անշուշտ, Իսահակյանի «Երգեր ու վերքեր»-ը, որը կանխորոշեց նրա ստեղծագործական ուղու հետագա ողջ ընթացքը:

Աշխեն Է. Զրբաշյան – գրականագետ, գրադվում է հայ գրականության պատմության և գրականության տեսության խնդիրներով:

¹⁸ Պետք է նշել, որ արդեն վերջին հրատարակության մեջ բանահավաքն ուղղել է իր կատարած սխալը և այդ երգը հանել ժողովածուից:

Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է գրական ժանրերի տեսությունը, պատումագիտությունը (նարատոլոգիան), հայ պոեզիայի տաղաչափությունը, գեղագիտության և գրականության տեսության առնչակցության հարցերը: Հեղինակ է շուրջ 60 գիտական հոդվածների, մենագրությունների և բուհական դասագրքի, համահեղինակ է բուհական ձեռնակի և ավագ դպրոցի գրականության դասագրքերի:

Գրականության ցանկ

1. **Ազգագրական հանդէս.** (1899). Ե գիրք, N 1. Շիրակի ժողովրդական երգեր: Թիֆլիս: Տպարան Կ. Մարտիրոսեանցի:
2. **Աղբալեան, Ն. (1898).** Երգ ու վերք, «Մուրճ» քաղաքական, հասարակական, գրական ամսագիր, N 6, Թիֆլիս, Տպարան Մ. Գ. Ռօտինեանցի:
3. **Թումանյան, Հ. (1994).** Երկերի լիակատար ժողովածու, Հատոր վեցերորդ: Եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:
4. **Ինձիկյան, Ա. (1977).** Ավետիք Իսահակյան: Եր, «Սովետական գրող» հրատարակչություն:
5. **Իսահակեան, Ա. (1898).** Երգեր ու վերքեր: Աղէքսանդրապոլ: Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի:
6. **Իսահակյան, Ա. (1946).** Իմ հուշերից: Երևան: «Հայպետհրատ» հրատարակչություն:
7. **Լէօ (1904).** Ռուսահայոց գրականութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը: Վենետիկ: Սբ Ղազար:
8. **Շիրակ. Հայոց բանահյուսական մշակույթը (2024).** Երևան. ՀԱԻ հրատարակչություն:
9. **Ջրբաշյան, Էդ. (1982).** Չորս գագաթ, Եր, «Սովետական գրող» հրատարակչություն:
10. **Ռամկական մրմունջներ. (1895).** Խմբագրեց դպիր Արշակ Յ. Բրուտեանց: Աղէքսանդրապոլ: Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի:
11. **Ռամկական մրմունջներ. (1904).** Խմբագրեց դպիր Արշակ Յ. Բրուտեանց, Չորրորդ տպագրութիւն: Աղէքսանդրապոլ: Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի:

Bibliography (Latin Script)

1. **Aghbalean, N. (1898).** Yerg u verq: “Murch” qaghaqakan, hasarakakan, grakan amsagir. N 6: T’iflis: Tparan M. D. Rotineants’i (**In Armenian**).
2. **Azagrakan handes. (1899).** E girq, N 1. Shiraki zhoghovrdakan yerger: T’iflis: Tparan K. Martiroseants’i (**In Armenian**).
3. **Jrbashyan Ed. (1982).** Chors gagat: “Sovetakan grogh” hratarakch’ut’yun (**In Armenian**).

